

# ԱՐԱՐԱՏ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԱՄՐՈՑԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ՄԱՆԿԱՎԱՐ-  
ԺԱԿԱՆ, ԱԶԳԱՎԵՒՆ ԾԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Թ Թ Թ Դ · Ի Թ · Տ Ա Ր Ի

Հ Ե Մ Ա Բ Ք Վ Գ Ե Յ Ե Բ Ո Ւ Բ Ո Ւ Բ

Յ Ո Ւ Լ Ի Ւ 1896 թ.

## Կ Բ Օ Ն Ա Կ Ա Ն - Բ Ա Ր Ա Յ Ա Կ Ա Ն

Վ Ճ Ա Տ Ե Ա Լ Ի Ւ Բ Ո Ղ Ա Փ Խ Ո Ւ Հ Ա Խ Ա Տ Տ Բ :

Խարեցներ զիս ծէր, եւ խարեցայ, յաղ-  
թամարեցներ եւ զօրացար. աղէ ի կառականս,  
զօր ամենայն հանի ի զրուս պապսնեալ. . . .  
Եւ ասացի, ոչ անուանեցից զանոն ծեանն,  
եւ ոչ ևս ճանացաց յանոն նորա. եւ եղեւ  
ի սրտի թմում երբեւ զոր քառակա, բորբ-  
քեալ ընդ ոսկերս իմ եւ լքայ յամենայն կող-  
մանց, եւ ոչ կարեմ հանդարտել:

Երեմ. ի. 7. եւ. 9.

**Պ**ու խօսիր կրկին, Ողբոց մարդարէ,  
որ երբեմն այս կոյր, անողորմ ան-  
միտ աշխարհում՝ մի գաճաճ ու չնշին սերուն-  
դի առաջ իրեւ հսկայ կանգնած, մէն միայ-

նակ քո անեզր վշտի, քո Ամենակալ Աստու-  
ծոյ հետ, ներկան ու գալիքը սրատես աչքե-  
րով զիտում էիր և քո ազդը, քո Խորացէլը  
անխուսափելի կորուսաից փրկելու համար ա-  
րած ձիգերգ ունայն գտնելով այդ զարհուրելի  
հեծիլտանքն արձակեցիր. Դու եղիր թարգ-  
ման մի ժողովրդի կողմից, որ յետին թշուա-  
ռութեան և յուսահատութեան գուռը հա-  
սած, բողոքում է քեզ պէս ու անիծում իւր  
ու օրը. «Ընդէլ է ինձ այս զի ելի յարգան-  
դէ տեսանել զցաւս և զվաստակս և վախճա-  
նեցան ամօթով տւուրք իմ»:

Այս մեծ էր քո սրտի դառնութիւնը.

հազիւ երբէք մէկը աշխարհի որդիներից մարդկութեան ցաւն իւր վերայ այնպէս անտանելի կերպիւ ծանրացած զգացել է, ինչպէս դու զգում էիր և երկնային լեզուով անջնջելի տառերով արտարերում բայց դու երանելի էիր այնուամենայնիւ, հրաշալի ողբասաց ամենասոսկալի փոթորիկների հանդեպ ևս անխորտակելի էր քո հաւատը, դու գիտէիր, որ եթէ իսրայէլ թշուառ էր և ողբմելի՝ իւր իսկ մեղքերն ու անմառութիւնն էին պատճառ, որ եթէ նա կործանման էր գատապարտուած և գէպի անկումն էր դիմում՝ նոյն ինքն իսրայէլի Արդար Աստուածն էր տանողը, այդ Աստուծոյ փառաց նախանձախնդիրն էիր դու և համոզուած էիր, որ եթէ ամեն ինչ ընկնէ, նա գոնէ կանգուն կմնայ, ուստի ամենատագնապալից բողէների համար իսկ բացականչել կարող էիր. «Եւ 8էր ընդ իս էր իրեւ զպատերազմօղ և զօրացուցանէր»: Իսկ մենք, ուր է ասան Մարգարէ՛, մե՛ր 8էրն ու զօրավիզը, ուր է քո և մեր հայրերի հըզօր Աստուածը. միթէ արդարեւ նորա հրամանով ենք այս անծայր տառապանքը կրում; Նորա սուրբ կամքն է, որ անդին արեամբ գնուած մի ժողովուրդ հիւծում է այսպէս, արագ քայլերով գէպի գերեզման, գէպի կորուստ ընթանում առանց մի տեղից փրկութեան յոյս ունենալու, առանց իւր զիմաց լուսոյ մի նշոյլ տեսնելու:


Ահա կրկին մի տարի իւր շրջանի բարձունքից զլորուում է գէպի մուտու, և ըշնութեան ու արուեստի առատ բերքերով ծանրաբեռնուած մարդիկ՝ դիմում են պահով ու յուսալից ապագայի գիրկը. մեծերը տուն են դառնում իրենց աշխատանքի քաղցր պատուներով՝ ձմեռուայ պաշարով, փոքրերը պատրաստում են տետրակն ու գրքեր գպրոց գնալու՝ նոր կեանք սկսելու, հայրենական ու աւանդները ժառանգելու. բայց ով այս ով պէտք է բերքեր ժողովէ հայի անտիրական արա ու անդաստանից, այրուած ու չորացած այգուց անտառից, ուր պէտք է ապաստան գտնեն նա տուն ու տեղ թողած, դոյքից ու սիրե-

լիներից զրկուած. ուր պէտք է ապաստանեն նորա խեղջու անօդնական, օրուայ հացի կարօտ որբերը՝ մինչ քաղաք ու գիւղ հրայ ձարակ են եղել գպրոցի դռները փակուել—թշուառութեան օրեր շատ է տեսել յիշաւի հին իսրայէլն ևս տեսել են աշխարհի բոլոր ազգերը. բայց նոցա ամենքի համար մի հերիք կար. այդ բարբարոս ժամանակներում մարդիկ մրայն իրենց թշնամու, ապստամբի հետ էին կռուում աւար կողովուաով կրքեր յագեցրնում և երբ յագեցան՝ հերիք է, ասում էին. այնպէս քաղաքագէտ ու իմաստուն չէին, որ ամիս ու տարիներ առաջ խորհեին, թէ ինչ օգուտներ յառաջ կզան, եթէ մի անգէն հըպատակ ժողովուրդ սրի անցնի կոխաղան հանուի. երբ հեղեղներով արիւն էր թափուում՝ ջուր է այդ, չէին ասում, հարիւր ընկածի տեղ երեքը հաշուում. մանկան իւր մօր կրծքում խեղելիս օրէնքի ու իրաւունքի անունով չէին արդարանումն ժժոխային արհաւերքների ենթակայ արեան ու արտասուաց մէջ ծփող զաւաներ՝ խաղաղութեան զրախտ հռչակում. բարբարոս էին, բայց իրենց արածն աշխարհի առաջ խոստովանելու քաջութիւն ունեին, և աշխարհը գեռ այնքան քաղաքակրթուած չէր, որ սատանան իրեւ հրեշտակ տեսներ . . .

Ահա մեր թշուառութիւնն անօրինակ է, չափ ու սահման չունի. Դու միայն չափել կարող ես այն, «8էր զօրութեանց, որ կըռես զիրաւունս» և քննես զիրտս և զիրիկամունս: Վրէմինդրութիւն չենք կանչում մենք հին ուխտի մարգարէի նման քրիստոնէից Մեծ, Ողորմած Աստուած, այլ գութ. «Դու յարուցեալ զժասցիս ի վերայ Սիրոնի, ժամանակ զժալոյ նորա հասեալ է ժամ: Բաղմաշարչար նահատակի, Մեծ Հուստորչի Աստուած, դու բաւ համարիր այս նահատակ ժողովրդի տառապանքը. Քո անուանն էր նա ապաւինել ու փրկեցիր անպատում նեղութիւններից ու փորձանքից. մի թոյլ տուր որ յետին յուսահատութեան մէջ ամբարշտաբար՝ շաբեցեր զիս բացական-

չէ. Անսուտ ու Հաւատարիմ՝ Աստուած, Դու զօրացներ մեր հաւատը, ինչպէս երբեմն մարդարէին, թող Քո խօսքը մեր սիրան ևս վառէ իրրե հուր և բորբոքէ մեր ոսկորները, և մենք նոյնպէս կարող լինինք այս գառն տաղնապի մէջ Քո մերձաւորութիւնն զգալ և եռանդուն յուսով երգել բարձրաձայն. «Օ՛Հետցէք զջէր» գովիցէք զնա, զի փրկեաց զանձն տնանկի ի ձեռաց չարաց» ամէ՞ն:

Ե. Վ.



ՃԱԲԵՇՆԵՐԻ ԻՐԵՒԻ ՄԻ ՀԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ  
ԿԱՆԴԱՑՈՒ, ԲՆԱՐԻՇ ԳԾԵՐԸ ԵՒ ԱՐԳԱԾԻՆ  
ԱԹԱՆԱՅՆԱՅՏԱՑՈՒԹԻՒՆԸ. \*

Հարեշների եկեղեցին քոյր է Պատիների (կոպտէրի) եկեղեցուն:

Միւշե այսօր իսկ Հարեշների եկեղեցու առաջն հոգևորական զլուխը՝ արունանց, որի ամոռը Կոնդարումն է, Պատիների Աղքասանդրից պատրիարքից (Պահէրէում նստող) ձեռնադրուած մի Պատի է:

Հարեշների եկեղեցու եգիպտականի հետ ունեցած այս կասը շատ հին է, սկսած այն ժամանակուանից, երբ եգիպտական եկեղեցին զուտ կոպտական չէր, այլ գտնուելով Հռովմէական պետութեան արևելեան կիսում՝ մեծ քաղաքների և տորին Եղիպտոսի մէջ ներկայանում էր իրրե մի մաս Հռովմէական պետութեան արևելեան յունախոս բաժնի եկեղեցու:

Քրիստոնէութեան ժագումը Հարեշշտառում (Եթովպիայում), տեղական աւանդութիւնը կտպումէ, մանուկ հասակից մեզ ծանօթ, Եթովպացու հետ, որ էր Աներինի հզօր Կանդակայ տիկնով Եթովպացույ» և որի դարձը Փիլիպպոս աւետարանցի ձեռքով պատմուած է Գործք առաքելոցի մէջ (Ը. 22). Սակայն որբան անկասկածելի է «Ներքնու» դարձի պատմութիւնը, նոյնքան պէտք է անհիմն համարել նրա հետ կապած աւանդութիւնը:

Մէ Դ. դարից առաջ Եթովպիայում քրիս-

տոնէութիւն եղել է, վստահելի հետքեր չկան, Այդ գարում Քրումենտիոս անունով մէկը Եթովպիայ առաքեալ է գարձել:

Արևմտեան եկեղեցու պատմիչ Առումինուր (+410) պատմումէ, թէ Քրումենտիոսը Տիւրացի էր և թէ մի անգամ իր եղբայր Եղեսիոսի և Հօրեղբայր Մերոպիոսի հետ Կարմիր ծովի վերաց Ճանապարհորդելու ժամանակ եթեր մասնակի Եթովպական ծովափերի մօտ նաւարեկութեան է Ենթարկուում և գերի ընկնում եղերանակ վայրենիների ձեռքը, որոնք նրա ուղեկիցներին սպանելուց և գերի վարելուց յետոյ, նրան և Եղեսիոսին տանում են թագաւորի պալատը Աւաքսումիս (Աքսում ոչ հեռու գեպի արեւմուտք Աղուայից), որ այն ժամանակ թագաւորութեան մայրագաղպն էր, Այստեղ 2 եղբայրները թագաւորի շնորհը վայելելով անարգել քրիստոնէութիւն են տարածում: Եղեսիոսը մի փոքր ժամանակից յետոյ վերադառնում է Տիւրաս, իսկ Քրումենտիոսը մնձն Աթանասից Աղէքսանդրիայում եպիսկոպոս ձեռնադրուելով մինչև իւր կեանքի վերջը մտում է Եթովպիայում հիմնած եկեղեցոյ դլուի:

Առումինոսի ասելով ինքն այս տեղեկութիւնները առել է նոյն իսկ Եղեսիոսից, սակայն եթէ այդ ստոյգ էլ համարենկու, պետք է որ նա մանրամասնութեանց մէջ զարդարած լինի: Այսպանը որոշ է, որ Քրումենտիոսը 357-ից շատ առաջ Աքսումում Աթանասից եպիսկոպոս էր ձեռնադրուած: Ինքն Աթանաս պահել է մեղ 357-ին Կոնստանդիոս կայսեր գրած մի նամակը, որի մէջ նա յորդորում է Եթովպիոյ տիրապետներին «չարաբարյաց» Աթանասի (Աթանաս այն ժամանակ արիստական կայսրից աքսոր էր ուղարկուած) ձեռնադրան Քրումենտիոսին նորից օծուելու և լաւագոյն հրահանգման համար ուղարկել Աղէքսանդրիա, ուր աթոռակալում էր մի արիստական եպիսկոպոս:

Հարեշների եկեղեցու եգիպտականի հետ ունեցած յարաբէրութիւնը առաջնի պատմութեան համար խիստ կարեոր Նշանակութիւն է ունեցել, Եղիպտական եկեղեցին Կ51-ից սկսած իւր միաբնակ լինելուն համար կղզիացաւ պետական եկեղեցու մնացեալ մասից: իսկ Յուստինիանոսի օրով (527—565) բոլորովին բաժանուեց նրանից (որ այն ժամանակ կայսերական եկեղեցի էր կոչում) և շնորհիւ մահմեդականների Եղիպտասին տիրապետելուն (մօտ 640) կարողացաւ պահպանել իւր անկախութիւնը. Հարեշական եկեղեցին իւր մայր եկեղեցու հետ միասին այսպիսով միաբնակութիւն ընդունեց:

Ահա այսպէս աստիճանաբար յետ մղուեց յունական տարրը եգիպտական միաբնակ եկեղեցուց,

\* Այս յօդուածը Christliche Welt Ելերթից (1896. № 15) փոխադրել է իմ օգութեամբ Գէրգանան ճնմարափ թ. Հարաբնի ուսմոնդ Յ. Թոփենան: Հայինակ՝ ուսուցապետ յօժիք, երեք մասնի էր բաժաննել այն. այսուղ ոյս է տեսնում Երկրորդ մասը, իսկ Երրորդը լոյս կտեսն յաջորդ համարում:

Ա. Վ.